# ՊԱՏԱՍԽԱՆԵՆՔ

# Մենք Նոր Սերունդի

# ՀԱՐՑԱՐԱՆԻՆ

«Մենք՝ Նոր Սերունդ»ի մեր աշխատակիցները մեր բոլոր ընթերցողներէն (երիտասարդ կամ տարեց) կը խնդրեն որ բարի ըլլան պատասխանելու իրենց այն անքէթին որ հրատարակուած էր Մենք՝ Նոր Սերունդի Ա. էջին մէջ։

Հարցումները հետեւեալն էին.

1.– Որքա՞ն կանոնաւոր կը կարդաք հայերէն օրաթերթ մը։

2.– Ամէնէն շատ կամ ամէնէն առաջ ո՞ր մասը կը կարդաք հայերէն օրաթերթի մը մէջ։

3.– Ինչպիսի՞ նիւթերու պակասը կը զգաք, հայերէն օրաթերթերու մէջ։

4.– Ինչպիսի՞ նիւթեր աւելորդ կը թուին ձեզի հայերէն օրաթերթին մէջ։

5.– Ուրիշ ինչպիսի՞ մտածումներ ունիք։

Այս հարցարանին տրուած իւրաքանչիւր պատասխան անտարակոյս պիտի ունենայ իր օգտակարութիւնը, որուն համար էջը պատրաստողները այժմէն շնորհակալ կ'ըլլան մեր ընթերցողներուն։

Պատասխանները կարելի է ուղարկել Մարմարայի հասցէին „պահարանին վրայ աւելցնելով (Ankete cevaptır) բառերը։

